Երեւան քաղաքի բնակիչների թիւը Վագներ հաշուում է 11–12 հազար, կէսից աւելին՝ հայեր: Բացի մի քանի ռուս ընտանիքներից, որոնք չուտ–չուտ փոխելիս են եղել իրենց բնակավայրը, ուրիշ տեւէ Եւրոպացի բնակիչ չէ եղել Երեւանում: Քաղաքից դուրս գաւառներում, ընդհակառակը, մահմետականները մեծամասնութիւն են կազմել: «Ռուսների տիրապետութիւնից առաջ հայերը Երեւանի շրջանի բնակչութեան հազիւ ⅓-ն էին կազմում... Մի քանի տարի յետոյ հաւանօրէն հայ աշխարհի այս «պատմական կենտրոնում» քրիստոնեայ տարրը իր թուով գերակշռող պիտի դառնայ: Վասնզի մահմետական բնակչութիւնը այստեղ շարունակ պակասում է: Թէեւ ռուս կառավարութիւնը իր հողի վրայ նստած թաթարներին այժմ այլեւս թոյլ չէ տալիս տեղափոխուելու, բայց եւ այնպէս հազիւ է անցնում մէկ ամիս, որ դրանցից մի քանի ընտանիք սահմանը չանցնին: Սրանք գերադասում են իրենց հաւատակից կառավարութեան ձեռքի տակ ապրել Ատրպատականում, թէկուզ աւելի դաժան վարչութեան ճնշումների ենթակայ»:

Ոչ միայն Երեւան քաղաքի, այլ եւ ամբողջ նահանգի տնտեսական խեղճութիւնը եւ ատիճանական անկումը աչքի է ընկել:

«Այդ բանը,— ասում է Վ.,— խոստովանում են մինչեւ իսկ շատ ռուս պաշտօնեաներ: Երկրում բնաւ գոյութիւն չունի ճարտարարուեստ, հողի արտադրութիւններն էլ սպառում են տեղացիներն իրենք»: Թէ ռուս «հայրախնամ կառավարութիւնը» ի՛նչպէս է ծծել հայոց աղքատիկ երկրի կենսական հիւթերը, երեւում է գերման ճամբորդի խօսքերից: «Ռուս պետական գանձարանը մի կողմից եւ այստեղ հարստացած պաշտօնեաները միւս կողմից, իւրաքանչիւր տարի կէս միլիոն ռուբլի են դուրս տանում Երասխի հովտի այս աղքատ երկրամասերից, ոչինչ չտալով դրա փոխարէն»: Ռուսների մուծած մաքսային արգելքները եւ տրանզիտի խափանումը յիշատակել է արդէն հեղինակը, նորից կրկնում եւ ընդգծում է նա այդ պարագան ու «կրկնակ կործանարար» անուանում դայն Հայաստանի համար, որ «մշտական խոց է բաց արել այս երկրի մարմնի վրայ»: Կարծէք բաւական չէր միջանցքային առեւտրի (տրանզիտ) խափանումի հետեւանքով ծագած տնտեսական չարիքը: Պակասը լրացնում են ռուս չինովնիկները:

Արժէ լսել Վագների վկայութիւնը մի հայ–ռուս բարձր չինովնիկի մասին՝ այդ իսկ տեսակէտից:

«Մագումով մի հայ, իշխան Բեհբութովը — Վ. զարմանում է որ իրենից առաջ Հայաստան եկած գերման ճամբորդ Կարլ Կոխ նրան «ամենասիրալիր» մարդկանցից մէկն է անուանում — որ առաջ տարիներ շարունակ այստեղի նահանգապետն էր, եղել էր երկրի ամենավատթար կողոպտիչը եւ բռնապետը: Ամբողջ ժողովուրդը միաբերան անիծում է նրան՝ որպէս նահանգի պատուհասը: Եւ ոչ մի փաշա, ոչ մի սարդար՝ աղքատ գիւղացու քրտինքից այնչափով ոսկեդրամ չէ հանել, որչափ՝ այս հայը: Իր դժբախտ հայրենակիցները նրա բաւական երկարատեւ ու դաժան՝ վարչութեան տակ անհաւատալիօրէն շատ տանջուել են: Իւրաքանչիւր ոք այն ժամանակ երազել է միայն այն մասին, որ վերադառնայ պարսիկ իշխանութիւնը... Այդ մարդու բռնութեան ահից ամէնքի լեզուն կապուած է եղել... Գաւառական բոլոր պաշտօնեաները նրա երկրպագուներն են եղել, որովհետեւ նրանք ազատ էին իրենց շրջաններում ուզածներն պէս ճնշելու ժողովուրդին, միայն թէ՝ իրեն լիովին վճարէին ստացած պաշտօնների համար պահանջուած գումարները»:

Պակասը լրացնում են, ուրեմն, միւս մեծ ու փոքր, չինովնիկները:

Այսպէս, Երեւանի գաւառապետ Գալաչեւսկին, որ ընդամէնը մի քանի ամիս միայն պաշտօնավարած է եղել, երկրից քաշել է այդ կարճ ժամանակամիջոցում 100,000 ռուբլի: «Նա իշխանի նման էր ապրում, շուքով շրջապատուած: Ես յաճախ նրան տեսնում էի շքազարդ երիվարի վրայ նստած ու բազմաթիւ մանկլաւիկներով շրջապատուած՝ զբօսնելու երթալիս»:

Բեհբութովը, «այդ սրիկան, վերջապէս թողնում է իր պաշտօնը՝ բեռնաւորուած հարստութեամբ եւ շքանշաններով: Իր տեղը